ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 27.03.2024թ. հ.61-2024թ. գրության՝ ՀՀ կառավարության «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. հ.912-Ն որոշման շրջանակներում Երևան քաղաքի Հաղթանակ 49-րդ տեղամաս հ.2,3 հողամաս հասցեում գտնվող ինքնակամ շինության օրինականացման վերաբերյալ, տեղեկացվում է.

Հարցը քննարկվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում և ստացել է նախնական դրական դիրքորոշում, սակայն փաստաթղթերի լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ քննարկվող ինքնակամ շինության մուտքի հարցը լուծվել է Երևան քաղաքի Հաղթանակ 49-րդ տեղամաս հ.2,3 հասցեում սեփականության իրավունքով Լյովա Սուքիասյանին պատկանող հողամասով, ուստի տվյալ կառույցի օրինականացման արդյունքում առաջանում է հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որը հակասում է ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» հ.912-Ն որոշման դրույթներին:

Ելնելով վերոգրյալից, հարցի քննարկմանը հնարավոր կլինի անդրադառնալ վերը նշվածի վերաբերյալ պարզաբանում կատարելուց հետո:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ